ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Ավատատիրական ենթակարգության սկզբունքով Զաքարյան Հայաստանն ընդգրկող և XIII դ. առաջին քսանամյակում տարածաշրջանի հզոր պետություններից մեկը հանդիսացող վրացական թագավորությունը դարի չորրորդ տասնամյակ մտավ իբրև փոքրիշատե լուրջ հակառակորդի դիմագրավելու անկարող երկիր: Այդ էին վկայում 1220-ական թվականներին նախ մոնղոլների, ապա ղփչաղների, իսկ վերջում խորեզմցիների հետ բախումներում հայ-վրացական բանակի շարունակական անհաջողությունները: Աննշան բացառությամբ պարտությամբ ավարտված այդ մարտերը լիովին բացահայտեցին ճկուն, նախահարձակ, շարժունակ և դրա շնորհիվ հաճախակի զորաշարժերով հարվածի ուղղությունը փոխող հակառակորդին դիմագրավելու երկրի քարացած ռազմական կազմակերպության անզորությունը: Վերջինիս կարևոր բաղադրամասերից էր սահմանապահ կուսակալությունների ցանց կազմող Զաքարյան Հայաստանը[1]: Այն կոչված էր պաշտպանելու ոչ միայն իրեն, այլև հարավից ու հարավ-արևելքից՝ նաև բուն վրացական տարածքները: Ուստի հենց Զաքարյան Հայաստանն էր, որ կրեց վերը նշված երեք հակառակորդների հարվածների հիմնական ծանրությունը և տնտեսական ու ռազմական առումներով խիստ թուլացավ: Ընդ որում, եթե թուրք-սելջուկների դեմ մղված հարձակողական մարտերի ընթացքում Զաքարյան իշխանական տան բոլոր ճյուղերի գործելակերպին բնորոշ էր փոխօգնությունը, ապա 1220-ական թվականների պաշտպանական մարտերի ժամանակ դա ըստ էության չդրսևորվեց: Զաքարյան իշխաններից յուրաքանչյուրն իր ուժին ապավինելով, փորձում էր հոգալ միայն սեփական տիրույթների անվտանգությունը:

Անհրաժեշտության դեպքում սահմանապահ կուսակալություններին պետք է օգներ արքունի բանակը[2]: Դա քանիցս կատարվեց, սակայն բոլորն էլ աննշան բացառությամբ անհաջող ելք ունեցան և, ի վերջո, ավարտվեցին 1229 թ. գարնանը Մինդորի ճակատամարտում արքունի բանակի կորիզը կազմող ղփչաղական զորամասի մարտադաշտ չմտնելով ու դրանով իսկ մարտի ելքը հօգուտ խորեզմցիների վճռելով[3]: Ինչ վերաբերում է երկրի պաշտպանությանը վրացական իշխանների մասնակցությանը, ապա

---

[1] Жизнь царицы Тамар.— "Памятники грузинской исторической литературы". Т. V, Тбилиси, 1985, с. 21, 37.

[2] *Նույն տեղում, էջ 38:*

[3] *Վրաց ժամանակագրություն (1207-1318). Երևան, 1971, էջ 70,* Рашид ад-Дин. Сборник летописей. Т. II, М.—Л., 1960, с. 28; Шихаб ад-Дин Мухаммад ан-Насиви. Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны. Баку, 1973, с. 225; The History of the World Conqueror, by Ala ad-din ata Malik Juvaini, vol. II, Manchester, 1959, p. 440-443.

այս հարցում ևս դրությունն անմխիթարական էր: Եթե արևելավրացական իշխաններն իրենց տիրույթներին սպառնացող իրական վտանգի հարկադրանքով այս կամ այն չափով մասնակցում էին պաշտպանական գործողություններին, ապա արևմտավրացական իշխանները երկրում գերիշխող գիրքերը 1190–1191 թթ. զիջելով պարփակվել էին սեփական իշխանություններում և, ապավինելով իրենց երկրամասի անառիկությանը, բնավ չէին հոգում պետության հարավային ու հարավարևելյան սահմանների անվտանգությունը: Այսպիսով, վրացական թագավորության ռազմական կազմակերպությունը փաստորեն փլուզվել և չէր գործում: Հիմնականում Թամար թագուհու օրոք (1184–1207) ձևավորված սահմանապահ կուսակալությունների ինստիտուտն առանց արքունի բանակի և վրացական իշխանազորի անհրաժեշտ օժանդակության անկարող եղավ վերը նշված մարտական հատկանիշներով օժտված հակառակորդներին գիմադրելուն: Մինգորի ճակատամարտից հետո, ի դեմս արքունի բանակի կորիզը կազմող զինչաղական զորքերի, վրաց Բագրատունիներն այլևս չունեին այն ուժը, որի օգնությամբ Դավիթ Շինարարից սկսած (1089–1125) հաջողությամբ պայքարում էին ներքին ու արտաքին թշնամիների դեմ: Բացի այդ, կենտրոնական իշխանությունը թուլանալով, ի զորու չէր վրաց (հատկապես արևմտավրացական) իշխաններին ստիպել կատարելու իրենց վասալային հիմնական պարտականությունը և մասնակցելու երկրի անվտանգության ապահովմանը:

Վրացական թագավորության թուլացումը ոչ այնքան արտաքին ծանր հարվածների, որքան երկրում ավատատիրական հարաբերությունների խորացման արդյունք էր, ինչն ավելի ցցուն դրսևորվեց երկրի վերնախավի ներսում հակասությունների սրմամբ: Դրանք նախքան այդ ևս կային, բայց արտաքին հաջողություններով, կենտրոնական իշխանության ուժեղությամբ և այլ գործոններով պայմանավորված թույլ էին արտահայտվում: Այժմ արդեն, շարունակական պարտությունների ու իրական սպառնալիքների ազդեցությամբ, դրանք դրսևորվեցին բացահայտ ու լիովին՝ խարխլելով երկրի պաշտպանական ներուժը:

Անվարան կարելի է պնդել, որ Մինդորի ճակատամարտից հետո վրացական թագավորությունն իբրև կենտրոնացված պետություն լոկ անվանապես կար: Քննվող ժամանակաշրջանում այն գլխավորում էր Ռուսուդան թագուհին (1222–1245): Նա օժտված չէր մոր խոհեմությամբ, ապրում էր թագակրին անվայել ու պետության վարկն արատավորող կենցաղով և առաջնորդվում էր առաջին հերթին նեղ անձնական շահախնդրություններով, որոնք հակասում էին երկրի շահերին: Դրժելով վաղամեռիկ եղբորը՝ Գեորգի Լաչային (1207–1222), տված խոստումը, երկրի համար այդ ծանր ժամանակաշրջանում նա եղբորորդու՝ Դավթի վտխարեն թագադրեց իր մանկահասակ նույնանուն որդուն, իսկ եղբոր տղայից փորձում էր բոլոր միջոցներով ազատվել[4]: Եվ դա այն դեպքում, երբ, ինչպես

[4] Վրաց ժամանակագրություն, էջ 58, 62, 67-68, 82, 95, Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց (այսուհետև՝ Գանձակեցի). Երևան, 1961, էջ 238, 289, 315-316, Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց (այսուհետև՝ Ակներցի). Երուսաղեմ, 1974, էջ 33, Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ Օրբելյան). Թիֆլիս, 1910, էջ 420-

Վանենի իշխանուհու 1232 թվակիր հիշատակարանի վկայության վրա հենվելով նկատել է Պ. Մուրադյանը, «շատերի աչքին Ռուսուդանը «աթոռակալ» էր... իսկ գահի օրինական ժառանգորդ շարունակում էր համարվել Լաշայի որդին»[5]: «Շատերի» թվում էին Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչները և արևելավրացական շատ իշխաններ, որոնք ըստ վրաց անանուն ժամանակագրի «հնազանդ Ռուսուդանի թագավորությանը... զբաղվածության պատճառով չկարողացան մասնակցել Դավիթ թագավորի հանդիսությանը»[6]: Եթե կենտրոնական իշխանության երդվյալ պաշտպան վրաց հեղինակը փորձել է ցանկալին իբրև իրականություն ներկայացնել, ապա իրավատում Կիրակոս Դանձակեցին երկրի թուլացման պատճառները տեսնում է Ռուսուդանի արատավոր գահակալության մեջ: Նա գրում է. «Թագավորութիւն վրաց նուաղեալ էր, վի էր ընդ ձեռամբ կնոջ, որում անուն էր Ռուսուդան... վաւաշ և կաթոտ, որպես զՇամիրամն... և այրի մնացեալ, վարէր զիշխանութիւն թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդւոյ իւրոյ Ավագին, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարէի և Վահրամայ և այլոցն»[7]: Քանի որ Զաքարյան Հայաստանն իր տարածքով ու ռազմատնտեսական կարողությամբ բուն Վրաստանին չէր զիջում, վրացական թագավորության կառավարման կարևոր լծակները Զաքարյան ավատատիրական տան ձեռքում գտնվելն օրինաչափ էր: Վրացական պետության տրքունի չորս, այդ թվում երկու խիստ կարևոր գործակալություններ (աթաբեկություն, ամիրսպասալարություն) նրանք էին տնօրինում: Սակայն մոնղոլական նվաճմանը նախորդած կարճատև խաղաղ ժամանակամիջոցում Զաքարյաններին չհաջողվեց իրագործել իրենց վրա դրված համապետական նշանակության գործառույթերից կարևորագույնը՝ երկրի պաշտպանունակության ամրապնդումը: Դա պայմանավորված էր ոչ միայն վերը նշված օբյեկտիվ պատճառներով, այլև՝ սուբյեկտիվ գործոններով: Իր բոլոր դրական հատկանիշներով հանդերձ, եղբոր՝ Զաքարեի, մահից (1212) հետո Զաքարյան իշխանական տան գլուխ անցած և մինչև իր կյանքի վերջը (1234) վրացական թագավորության «փաստական կառավարիչ»[8] Իվանե աթաբեկը զուրկ էր նրա զորավարական ու կազմակերպչական տաղանդից: Դա վկայում է թեկուզ Գառնիի 1225 թ. ճակատամարտում Իվանեի գլխավորած հայ-վրացական բանակի ջախջախիչ պարտությունը[9]: Ինչ վերաբերում է նրանց հետնորդներ Շահնշահին ու Ավագին և հորեղբոր թոռ Վահրամ Գագեցուն, ապա նրանք ստիպված էին գործել անհամեմատ դժվարին ու անբարենպաստ ներքին և արտաքին պայմաններում: Մոնղոլական ներխուժման իրական սպառնալիքն անգամ

421, М у х а м м а д а н - Н а с и в и, с. 223. Материалы по истории Азербайджана из Тарих ал-Камиль (Полного свода истории) Ибн ал-Асира. Баку, 1940, с. 314 *և ուրիշներ:*

[5] *Պ. Մ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Հայաստանի վրացերեն արձանագրություններ. Երևան, 1977, էջ 155:*

[6] *Վրաց ժամանակագրություն, էջ 68:*

[7] *Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 238:*

[8] С а р к и с К а к а б а д з е. Грузинская царица Тамара Великая.— "Кавказское слово", 1916, № 99.

[9] *Մանրամասն տե՛ս Հ. Գ. Մ ա ր դ ա ր յ ա ն. Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ.— ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 3, էջ 72-81:*

նրանց չդրդեց դոնե իրենց ենթակայության տակ գտնվող և նախորդ տասնամյակում քանիցս ասպատակված Զաքարյան Հայաստանի թեկուզ և հյուծված ուժերը համախմբել: Նրանք XIII դ. 30-ական թվականներին պարփակվել էին իրենց տիրույթներում և նրանց պաշտոններն այդ շրջանում ոչ միայն համապետական, այլև նեղ իմաստով համահայկական դրծառույթ չկատարեցին[10]: Ուստի, այդ իրադարձությունների ժամանակակից Կիրակոս Գանձակեցին և մի քանի տասնամյակ անց ապրած վրաց անանուն ժամանակագիրը միանդամայն իրավացի էին պնդելով, որ «ոչ ոք էր, որ ընդդէմ կայր նոցա (մոնղոլների – Ա. Շ), կամ պատերազմէր ընդ նոսա[11]», քանզի «միմյանց հետ անմիաբան ... և անհամախոհ Վրաստանի զորեղներն ու անվանիք անկարող դարձան թաթարների (մոնղոլների – Ա. Շ.) դեմ փրկության կռիվ տալու»[12]:

Վրացական թագավորությունում, այդ թվում Զաքարյան Հայաստանում, նման իրավիճակը չէր կարող հայտնի չլինել մոնղոլներին: Մոնղոլական մեծ խան Ուգեդեյը (1229–1241) խորեզմշահ Ջալալ ադ-Դինին ջախջախելու նպատակով 1230 թ. Զարմազանի գլխավորությամբ 30 հազարանոց բանակ ուղարկեց[13]: Ի վերջո, Զարմազանին, որին Կիրակոս Գանձակեցին բնութագրում է իբրև «այր խորագէտ և իմաստուն, և յաջողած ի գործս պատերազմի»[14] հաջողվեց 1231 թ.Մայաֆարկինի մոտ լիովին ջախջախել Ջալալ ադ-Դինի զորքերի մնացորդները, որին հեռևեց ինչ-որ քրդի ձեռքով վերջին խորեզմշահի սպանությունը[15]: Դրանից հետո մոնղոլներն ասպատակեցին հարակից բազմաթիվ շրջաններ՝ ավերելով ու թալանելով բազմաթիվ մեծ ու փոքր բնակավայրեր՝ սրի քաշելով հազարավոր մարդկանց[16]: Այնուհետև աշնանը, նրանք Ատրպատականի վրայով մտան Աղվանք և բարեբեր Մուղանի տափաստանում ձմեռեցին: Հաջորդ տարի, այն է՝ 1232 թ., նրանք դրավեցին, թալանեցին ու հիմնահատակ կործանեցին Աղվանքի տնտեսական կենտրոն հարուստ Գանձակը[17]: Իբրև կանոն, մոնղոլների ցանկացած ռազմական գործողության նախորդում էր հակառակորդի խնամքով կատարված հետախուզությունը[18]: Ինչպես պնդում է Հ. Զամչյանը, նրանք «առաքեցին անտի լրտեսս յաշխարհն վրաց... և մեծին

---

[10] Լ. Հ. Բաբայան. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում. Երևան, 1964, էջ 198:

[11] Գանձակեցի, էջ 254:

[12] Վրաց ժամանակագրություն, էջ 74:

[13] Абул-Гази. Родословная история о татарах. Т. I, СПб., 1768, с. 146; Хондемир. История монголов: от древнейших времен до Тамерлана, СПб., 1834, с. 35, The History of the World Conqueror..., vol. I, 1958, p. 190.

[14] Գանձակեցի, էջ 233:

[15] Мухаммад ан-Насиви, с. 294-296; Рашид ад-Дин, т. II, с. 30-31.

[16] Արաբական աղբյուրներ. Բ, Իբն ալ Ասիր, Երևան, 1981, էջ 344-346, Անանուն Եդեսացի. Ժամանակագրություն. Երևան, 1982, էջ 185, Վրաց ժամանակագրություն, էջ 72:

[17] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար. Երևան, 1984, էջ 183:

[18] И. М. Иванин. О военном искусстве и завоеваниях монголо-татар и среднеазиатских народов при Чингиз хане и Тамерлане. СПб., 1895.

Հայոց՝ որ յորժամ ընդ իշխանութեամբ վրաց էր. և տեղեկացան ամէնայն հանգամանաց երկրին»[19]:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ Գանձակն ավերելուց հետո մոնղոլներն Աղվանքից հեռացել են Իրան, որպեսզի վերանվաճեն ապստամբած շրջանները և ամրապնդեն իրենց թիկունքը[20]: *Ռաշիդ ադ-Դինի համաձայն, իրոք, Իրանում, հատկապես Մազանդարանում ընդվզումներ էին սկսվել, որոնք ճնշեց Ջարմազանի օգնական և Մազանդարանի էմիր Զինթիմուրը*[21]: *Ամենայն հավանականությամբ, Աղվանքից մոնղոլների հեռանալու մասին պնդման տեղիք է տվել Կիրակոս Գանձակեցու վկայությունը, ըստ որի, մոնղոլները Գանձակն ավերելուց հետո «ի բաց գնացին»*[22]: *Սակայն պատմիչը դրանով նկատի է ունեցել մոնղոլների ոչ թե առհասարակ Աղվանքից, այլ՝ Գանձակից հեռանալը: Նա նախքան այդ գրում է, որ մոնղոլները Ջալալ ադ-Դինին ջախջախելուց հետո գրավեցին Ատրպատականը, որտեղից ընտանիքներով մտան Աղվանք և Մուղանի բարեբեր դաշտը ձմեռանոց դարձնելով «ի ժամանակս գարնանային սփռէին ընդ կողմանս կողմանս ասպատակաւ և աւերմամբ, և դարձեալ դառնային, անդրէն բանակէին»*[23]: *Անվիճելի է, որ մոնղոլները Ջաքարյան Հայաստանի վրա հարձակվեցին Մուղանից և այն նվաճելուց հետո աշնանը վերադարձան այնտեղ*[24]: *Հետևաբար, Մուղանից մոնղոլները հեռանում էին միայն գարնանը՝ ռազմական գործողություններ իրականացնելու նպատակով, իսկ աշնանը վերադառնում էին այնտեղ՝ ձմեռելու:*

Հայ պատմագիտության մեջ գերիշխող տեսակետի համաձայն 1235 թ. Ուգեդեյի հրավիրած ղուրուլթայում որոշվել էր գրավել ոչ միայն Ռուսաստանն ու հարևան երկրները, ինչպես գրում է Ռաշիդ ադ-Դինը[25], *այլև Անդրկովկասի մնացած շրջանները, այդ թվում վրացական թագավորությունն ու դրա բաղկացուցիչ մաս Ջաքարյան Հայաստանը: Անկասկած, այդ կարծիքի հիմքում ընկած է Ռուսաստանում ու հարակից երկրներում, ինչպես նաև Անդրկովկասում լայնածավալ ռազմական գործողությունների համաժամանակությունը՝ 1236 թվականը: Սակայն բանն այն է, որ նույն Ռաշիդ ադ-Դինի վկայությամբ մոնղոլները Չինաստանում, Տիբեթում ու Հնդկաստանում ոչ պակաս ծավալուն մարտեր են սկսել հենց 1235 թ., բայց ոչ թե ղուրուլթայի որոշմամբ, այլ՝ Ուգեդեյի անմիջական հրամանով*[26]: *Բացի այդ, Ռուսաստանում և հարակից երկրներում կռվելու համար Բաթուին օգնելու նպատակով Ղարազորումից լրացուցիչ խոշոր ուժեր են ուղարկվել, որոնք ռազմերթին նախապատրաստվելու և տեղ*

---

[19] *Մ. Ջ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն. Հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 206:*

[20] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Հ. Գ, Երևան, 1952, էջ 197, Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. Նշվ. աշխ., էջ 195, Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1975, էջ 582:*

[21] Р а ш и д а д - Д и н, т. II, с. 33—34.

[22] *Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 237:*

[23] *Նույն տեղում, էջ 234-235:*

[24] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն). Վենետիկ, 1862, էջ 144, Ա կ ն ե ր ց ի, էջ 23, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 196, Վրաց ժամանակագրություն, էջ 72, 74:*

[25] Р а ш и д а д - Д и н, т. II, с. 35—36.

[26] *Նույն տեղում, էջ 36:*

հասնելու համար երկար ամիսներ են կորցրել[27]: Ինչ վերաբերում է Զարմաղանին, ապա նա գտնվում էր տեղում և Ուգեդեյի հրամանով հենց 1235 թ. կարող էր գործի անցնել, առավել ևս, որ մեծ խանը մի առիթով դժգոհել էր նրա գործողությունների արդյունքներից[28]: Հայկական որոշ արժանահավատ սկզբնաղբյուրների հաղորդումներն իրենց հերթին ստիպում են մտածել, որ մոնղոլները Զաքարյան Հայաստանի բաղկացուցիչը կազմող Վահրամյանների իշխանություն են ներխուժել 1235 թ. ամռանը[29]: Այդ իրողության համապարփակ քննությունը թողնելով այլ առիթի[30], նկատենք, որ Գանձակի գրավումից ի վեր վրացական թագավորության անմիջական հարևանությամբ Ազվանքում հաստատված և դեռ 1220-1222 թթ. երիցս այնտեղ ներխուժած մոնղոլները[31] քաջածանոթ էին ինչպես այդ պետության ներքին անմխիթար վիճակին, այնպես էլ բերդերի տեղադրությանն ու վարչատարածքային բաժանմանը: Վստահ լինելով, որ կազմակերպված դիմադրության չեն հանդիպի, ինչպես նաև ելնելով տեղանքի կտրտվածության պատճառով խոշոր ուժերի զորաշարժերի հետ կապված դժվարություններից ու բերդերի ցրվածությունից, Զարմաղանն ու նրա զորավարները, որոնցից գլխավորը Զաղաթայն էր[32], հրաժարվեցին միասնական մարտավարության մաքառումից: Նրանք մոնղոլական ոչ այնքան մեծաթիվ՝ 30 հազարանոց, բանակը բաժանեցին առանձին ջոկատների, որոնք, աղբյուրների համեմատությամբ, իրենց հրամանատար նոյիններ գլխավորությամբ ձեռնամուխ եղան Զաքարյան Հայաստանի և Արևելյան Վրաստանի՝ վիճակահանությամբ բաժին հասած այս կամ այն իշխանության ու գավառի գրավմանը[33]:

Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ խորամանկ ու չրջահայաց մոնղոլները ճիշտ մարտավարություն էին ընտրել: Ռուսուդան թագուհին պետության թեկուզ և տկար ուժերը համախմբելու ու թշնամուն միացյալ հակահարվածի փորձ կատարելու փոխարեն մտածելով միայն սեփական և որդու անձի փրկության մասին, ինչպես խորեզմցիների ներխուժման ժամանակ էր վարվել՝ ապաստանեց անհամեմատ անվտանգ Արևմտյան Վրաստանում՝ Քութայիսում: Այդ է վկայում վրաց անանուն ժամանակագիրը: «Թաթարների (մոնղոլների – Ա. Շ.) գալն իմանալով,– գրում է նա,– Ռուսուդան թագուհին թողեց Տփղիսը և գնաց Քութաիս»[34]: Ասվածի հաշվառմամբ գժվար է համերաշխվել Յու. Սիխարուլիձեի հետ,

---

[27] Նույն տեղում, էջ 36, 37:

[28] Նույն տեղում, էջ 34:

[29] Տե՛ս օրինակ, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7433, թ. 264, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ գար, էջ 203, Հ. Տ ա շ ե ա ն. Ցուցակ ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Վիեննա, 1895, էջ 39, Լ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ. Հովհաննես Վանական Տավուշեցու անտիպ երկերից.– «Էջմիածին», 1959, № 9, էջ 36 և այլն:

[30] Հարցի համառոտ քննությունը տե՛ս Ա. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. Վահրամյանների իշխանությունը. Երևան, 1990, էջ 111-112:

[31] Մանրամասն տե՛ս Ա. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. Մոնղոլների հետախուզական արշավանքն Անդրկովկաս (1220-1222).– «Պատմա-բանասիրական հանդես», 2000, № 2, էջ 85-107:

[32] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 253, 264, 275, 320:

[33] Նույն տեղում, էջ 237-238, Վ ա ր դ ա ն, էջ 144, Ա կ ն ե ր ց ի, էջ 26:

[34] Վրաց ժամանակագրություն, էջ 73:

ըստ որի թագուհու այդ քայլը պաշտպանական հատուկ տակտիկայի արդյունք էր[35]:

Մինչդեռ դա միայն ու միայն սեփական անձի փրկությանը միտված և երկրի առավել խոցելի հատվածը թշնամու ողորմածությանը հանձնող՝ թագակրին անվայել քայլ էր: Եթե թագուհին հասկանում էր (այլ կերպ հնարավոր չէր), որ մոնղոլներին անհնար է դիմադրավել, ապա պետք է ջանար բանակցել նրանց հետ՝ փորձելով գոնե այդ կերպ կանխել երկրին սպառնացող աննախադեպ արհավիրքը: Ռուսուդանի հետագա քայլերը ևս պարզորոշ վկայում են, որ դրանց հիմքում, եթե ոչ ամբողջապես, ապա, առաջին հերթին, ընկած էին նեղ անձնական շահերը: Վստահաբար պնդելի է, որ Ռուսուդանը նախօրոք էր պատրաստվել այդ քայլին, ինչը նրա մերձավոր շրջապատի համար գաղտնիք լինել չէր կարող: Միաժամանակ, հեռու ենք այն մտքից, որ վրաց արքունիքն այլ կերպ գործելու դեպքում ունակ կլիներ հետ մղելու մոնղոլական ներխուժումը: Ասվածի հաշվառմամբ հատկանշական է Ռ. Կիկնաձեի այն դիտարկումը, ըստ որի քանզի «թագուհին թաքնվեց Արևմտյան Վրաստանում և, ըստ էության, հրաժարվեց մոնղոլներին դիմադրություն կազմակերպելուց, վրացական (բայց ինչո՞ւ վրացական և ոչ թե հայ-վրացական – Ա. Շ.) մեծատոհմիկները նախընտրեցին սխալ, պասսիվ տակտիկա. վրացական արքունիքի վեզիրները, առանձին մարզերի կառավարիչներն ամրացան տարբեր բերդերում և դրանցից հետևում էին իրադարձությունների ընթացքին»[36]: Իսկ դրանք զարգանում էին հօդուտ թշնամու, որի հարվածի հիմնական ծանրությունն այս անգամ ևս ստիպված էր իր վրա վերցնելու վրաց արքունիքի կողմից իր հույսին թողնված Զաքարյան Հայաստանը: Այս առումով բնութագրական է, որ Գեորգի Լաշան 1222 թ. մոնղոլների նախորդ հետախուզական, արշավանքի ժամանակ, թշնամուն պետության արևելյան սահմանագլխին, դիմակայելու փոխարեն նրա հերթական ներխուժումը մտադիր էր հետ մղել Լոմթա-Գորա-Ագարա բնագծից հոգալով միայն բուն Վրաստանի անվտանգությունը[37]:

Վահրամյանների տիրույթների վրա մոնղոլների հարձակումը եթե նույնիսկ 1235-ին չի կատարվել (ինչում համոզված չենք), աշխարհագրական դիրքի և Պարտավ–Գանձակ–Շամքոր–Տփխիս մայրուղին հսկելու պատճառով կրեց առաջին հարվածը: Բնական է, որ մոնղոլներին առաջին հերթին հետաքրքրում էր Վահրամյանների իշխանության արևելյան ծայրամասում ընկած և հիշյալ մայրուղու վրա գտնվող վաճառաշահ Շամքոր քաղաքը: Մոլար նոյինը, որին բաժին էր ընկել Վահրամյանների իշխանությունը, ոչ թե այդ քաղաքը միանգամից մեծ ուժերով պաշարեց, այլ՝ Մուղանից մոտ 100 հոգիանոց ջոկատ ուղարկեց, որը փակեց Շամքորի մուտքերը և այն կտրեց արտաքին աշխարհից: Շամքորցիներն օգնություն խնդրեցին Վահրամ Գագեցուց ու նրա որդի Աղբուղայից, միաժամանակ

---

[35] Ю. М. Сихарулидзе. Борьба грузинского народа против татаро-монгольского ига (автореф. дис. на соискание уч. ст. доктора ист. наук). Тбилиси, 1969, с. 22.

[36] Ակնարկներ Վրաստանի պատմության. հ. III, Թբիլիսի, 1979, էջ 547 (վրացերեն):

[37] Քարթլիս ցխովրեբա. հ. I, Թբիլիսի, 1955, էջ 370 (վրացերեն):

հայտնելով, որ մոնղոլները «սակաւք են»[38]: Սակայն բազմափորձ Վահրամյան իշխանը, որը քանիցս մարտերում դրսևորել էր իր զորավարական տաղանդն ու խիզախությունը, ոչ միայն արգելեց օգնել շամքորցիներին, այլև նրանց հրամայեց չդիմադրել մոնղոլներին, պնդելով, որ նրանք «բազումք են»[39]: Իբրև սահմանապահ կուսակալի, Վահրամ Գագեցուն չէր կարող հայտնի չլինել, որ մոնղոլական բանակի թվաքանակը հարյուրով չէ, որ սահմանափակվում է: Նրան ի պաշտոնե քաջ հայտնի էր Գանձակի դառը ճակատագիրը, և նա բնավ չէր կասկածում, որ մոնղոլներին դիմադրելու դեպքում Շամքորին նույնն է սպառնում: Վահրամ Գագեցու ի վերջո Քութայիսում ապաստանելը ևս մտածել է տալիս, որ նա իրազեկ էր Ռուսուդանի այնտեղ փախչելու մասին, ուստի արքունիքից օգնության որևէ հույս չուներ: Նրան չսատարեցին նաև Ավաղ ու Շահնշահ Զաքարյանները և Սարգիս Թմոգվեցին, իսկ նախ մոնղոլների, ապա խորեզմցիների ասպատակությունների ու նվաճումների ընթացքում խիստ թուլացած իր իշխանության[40] ուժերով չէր կարող հակադրվել մոնղոլներին: Ուստի, դա էր պատճառը, որ վերջիններիս հետախուզական արշավանքի ընթացքում նրանց դեմ խիզախությամբ և հայ ու վրաց իշխաններից միակը հաջողությամբ կռված[41] Վահրամ Գագեցին ստիպված էր տեղի տալ: Շամքորցիներին նման հրաման տալով, նա ուզում էր իր իշխանությունը հնարավորինս զերծ պահել նոր, ավելի սոսկալի արհավիրքներից: Այս լույսի ներքո անհնար է Վահրամ Գագեցուն մեղադրել իրեն պատկանող քաղաքի ճակատագրի նկատմամբ հանցավոր անտարբերության և վախկոտության մեջ, ինչպես վարվել են վրացի և ադրբեջանցի որոշ պատմաբաններ[42]:

Սակայն շամքորցիները չանսացին իրենց իշխանի հրամանը: Ինչպես և սպասում էր Վահրամ Գագեցին, Շամքորի մուտքերը փակած մոնղոլների թիվը դնալով աճեց, ապա այնտեղ եկավ նաև Մոլար Նոյինը: Տեսնելով, որ քաղաքը չի հանձնվում, մոնղոլները սկսեցին դրոհը: Միայն իրենց ուժերին ապավինած շամքորցիները կատաղի դիմադրում են: Մոլար Նոյինը հրամայում է Շամքորի շուրջ փորված պաշտպանական խրամատը լցնել փայտով ու ծղոտով, որպեսզի հեշտացվի քաղաքի պարիսպների հաղթահարումը: Շամքորցիները դիշերը հրդեհում են ծղոտն ու փայտը: Մոլար Նոյինը հրամայում է խրամատը լցնել հողով և հավասարեցնել պարիսպների բարձրությանը: Դա մոնղոլներին թույլ է տալիս պարիսպների վրայով հեշտությամբ ներխուժել քաղաք, որը հրկիզվում ու կողոպտվում է, իսկ բնակչությունը գլխովին սրի է քաշվում[43]: Վարդան վարդապետը ևս շեշտում է Շամքորը «հնարիւք» դրավելու իրողությունը[44]: Այդպիսով, այդ քաղաքը ևս նվաճվեց մոնղոլական պաշարողական մարտարվեստի բոլոր

---

[38] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 241-242:
[39] Նույն տեղում, էջ 242:
[40] Մանրամասն տե՛ս Ա. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 103-106:
[41] Ա կ ն ե ր ց ի, էջ 21-22:
[42] История Грузии, т. I, Тбилиси, 1962, с. 227, 228; История Азербайджана, т. I, Баку, 1958, с. 177-178; А. А. А л и - З а д е. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв. Баку, 1956, с. 112.
[43] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 242:
[44] Վ ա ր դ ա ն, էջ 145, հմմտ. Ա կ ն ե ր ց ի, էջ 23:

կանոններին համապատասխան[45], բաժանելով կամովին չհանձնված այլ քաղաքների տխուր ճակատագիրը: Նման բնակավայրերի նկատմամբ մոնղոլների ծայրահեղ դաժանությունն ի թիվս այլ խնդիրների՝ դեռևս չնվաճված շրջանների բնակչության մեջ զանգվածային խուճապ սփռելու նպատակ էր հետապնդում, ինչը նրանց հնարավորություն էր տալիս քիչ զոհերով ու արագորեն հասնել նոր հաջողությունների:

Համոզվելով կազմակերպված դիմադրության չգոյության մեջ, Մոլար նոյինն իր ուժերը երկատեց: Դրանք «ամենայն աղխիւն իւրեանց»[46] ուղղություն վերցնելով դեպի արևմուտք և հարավ-արևմուտք, խորացան Վահրամյանների իշխանությունում: Մի զորաջոկատը, որն ըստ Կիրակոս Գանձակեցու գլխավորում էր ինքը՝ Մոլար նոյինը, շարժվելով դեպի արևմուտք, պաշարեց Տավուշ, Կածաթեթ, Նոր Բերդ, իսկ վերջում՝ իշխանության արևմտյան ծայրակետում գտնվող Գագ բերդը՝ Վահրամ Գագեցու իշխանանիստը: Մյուս զորաջոկատը, որի հրամանատարի անունը պատմիչը չի հայտնում, գնաց հարավարևմտյան ուղղությամբ և օղակեց Տերունական, Երգևանք ու Մածնաբերդ բերդերը[47]: Կիրակոս Գանձակեցին Վահրամյաններին պատկանող Քարհերձ, Սագամ ու Քավազին բերդերի գրավման մասին լռում է: Նրա պատմածը լրացնում են Վարդան վարդապետն ու հատկապես Գրիգոր Ակներցին: Եթե Վարգան վարդապետն իր սննդակցի թվարկած բերդերին ավելացնում է միայն Քավազինը[48], ապա Գրիգոր Ակներցին դրան գումարում է նաև Քարհերձն ու Սագամը և աղբյուրներում միայն իր մոտ հանդիպող և, անկասկած, գրչական աղավաղմամբ «Տերեւեն» տառաշարքով մեզ հասած դղյակը[49]: Դատելով Գրիգոր Ակներցու՝ բերդերի թվարկման հաջորդականությունից, այն ընկած էր Վահրամյանների իշխանության ծայր հարավ-արևելակողմում՝ Քարհերձի ու Գարդմանի հարևանությամբ: Զնայած ըստ Վարդան վարդապետի Վահրամ Գաղեցու տիրույթները միայն Մոլար նոյինին են բաժին ընկել[50], Կիրակոս Գանձակեցու պնդմամբ Գարդմանը Զարեքի ու Գետաբակի հետ հասել է Ղատաղա նոյինին[51]: Կիրակոս Գանձակեցու հավաստիությունը երևում է Վարդան վարդապետի այն վկայությունից, որ Գարդմանին մերձակա Զարեքը, Գետաբակն ու Վարգանաշատը գրավել էր նույն Ղատաղա նոյինը[52]: Քանի որ Զարեքն ու Գետաբակը պատկանում էին Ավագ Զաքարյանին[53], պարզվում է, որ մոնղոլները Զաքարյան Հայաստանի գրավմանը նախապատրաստվելիս առաջնորդվել են նրա թե՛ վարչատա-

---

[45] Հմմտ. И. П. Петрушевский. Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV веков. М.—Л., 1960, с. 33:

[46] Գանձակեցի, էջ 243:

[47] Նույն տեղում:

[48] Վարդան, էջ 145:

[49] Ակներցի, էջ 23: Հ. Ստեփանյանը վկայակոչելով պատմիչի աշխատության Ք. Պատկանյանի հրատարակությունը (Ս. Պետերբուրգ, 1870, էջ 6-7) կամայական կրճատմամբ խմբագրել է հղումը և «Տերեւենը» նույնացրել Տերունականի հետ: Մինչդեռ, Գրիգոր Ակներցին հստակ տարբերակել է այդ տեղանունները, հղման կրճատված մասում թվարկելով նաև Տերունականը:

[50] Վարդան, էջ 144:

[51] Գանձակեցի, էջ 243: Հմմտ. Հ. Մանանդյան. Նշվ. աշխ., էջ 202:

[52] Վարդան, էջ 144:

[53] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 140:

ռածքային բաժանմամբ և թե՛ բերդերի տեղադրությամբ: Նկատենք նաև, որ վերը թվարկված բերդերից Մածնաբերդն ու Նոր Բերդը պատկանում էին Վահրամյանների վասալներին. առաջինը՝ Ազսարթան, իսկ երկրորդը՝ Վասակ Կյուրիկյաններին՝ Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների շառավիղներին:

Մոլար Նոյինի զորաջոկատը պաշարում է նաև Տավուշ բերդի հարավակողմում գտնվող՝ Վանական վարդապետի քարայրը, որտեղ շրջակա դյուզերից ապաստանել էին բազմաթիվ անպաշտպան մարդիկ: Երբ ամառային սաստիկ տապի ու ծարավի պատճառով երեք օր անց նրանք սկսում են տառապել, Վանականը դնում է Մոլար Նոյինի մոտ և հայտնում, որ իրենք խաղաղ ու չունևոր մարդիկ են, հավելելով, թե «զոր ինչ կամ է ձեր, արարէք ընդ մեզ թէ՛ կենօք և թէ՛ մահուամբ»[54]: Մոլար Նոյինը ոչ միայն դրական նկատառումներով, այլև, հավանաբար, Վանականի խոսքերի ազդեցությամբ քարայրում ապաստանածներին ոչ միայն չի կոտորում, այլև խոստանում է «իւրաքանչիւր յիւրում տեղւոջ կեալ իւրովք վերակացուօք, և յանուն նորա (Վանականի – Ա. Շ.) չինել զգիւղսն և զգաղրակսն»[55]: Ուրեմն, մոնղոլները ոչնչացրել էին իրենց ճանապարհին ընկած բնակավայրերը: Մոնղոլները թալանում են Վանականի քարայրը և գերում նրան ու իր աշակերտներից շատերին, այդ թվում Կիրակոս Գանձակեցուն: Ի վերջո, Վանականին 80 դահեկանով փրկագնում են Գադ բերդի բնակիչները, իսկ Կիրակոս Գանձակեցին աշնանային մի օր փախչում և ապաստանում է Գետիկ վանքում[56]:

Վարդան վարդապետի վկայությամբ, Վահրամյանների իշխանության բոլոր ամրություններն ու բնակավայրերը «ամենեքեան տուեալ լինէին ի ձեռս նոցա (մոնղոլների – Ա. Շ.) ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան»[57]: Կիրակոս Գանձակեցու պատմածից ևս հետևում է, որ դիմադրության փաստական բացակայության պատճառով այդ իշխանության գրավումը շատ կարճ է տևել՝ սկսվելով ամռանը, տևել է մինչև աշուն[58]: Գրիգոր Ակներցու «առին եւ դրծով զամուր դղեկն զՏաւուշ»[59] խոսքերից հետևում է, որ այդ հզոր բերդը կամովին չէր հանձնվել: Գադ բերդն ակնհայտորեն չէր դիմադրել, քանի որ հիմնավոր չէր թալանվել, իսկ բնակչությունը սրի չէր քաշվել: Հակառակ դեպքում, գագեցիները հազիվ թե կարողանային Վանականին փրկագնելու համար իր ժամանակի համար զգալի դումար՝ 80 դահեկան հավաքել[60]: Ինչ վերաբերում է Վահրամ Գագեցուն, ապա նա մոնղոլական ներխուժման ժամանակ գտնվում էր Գարդման բերդում: Ղատաղա Նոյինի զորաջոկատի մոտենալուն պես, նա մի գիշեր այնտեղից փախուստի դիմեց[61]: Թշնամուն կազմակերպված

---

[54] Գանձակեցի, էջ 246, հմմտ. Վարդան, էջ 145-146, Ակներցի, էջ 23:
[55] Գանձակեցի, էջ 246-247:
[56] Նույն տեղում, էջ 247-252:
[57] Վարդան, էջ 145:
[58] Գանձակեցի, էջ 244, 249:
[59] Ակներցի, էջ 23:
[60] Գանձակեցի, էջ 251-252, հմմտ. Վարդան, էջ 146, Ակներցի, էջ 23:
[61] Գանձակեցի, էջ 252:

դիմադրելու ուժ չունենալով, նա որդու՝ Աղբուղայի հետ, տեղից տեղ էր փախչում[62]: Դա մոնղոլներին հնարավորություն չէր տալիս գերելու նրան: Ուշագրավ է, որ Մոլար նոյինը չիմանալով նրա գտնվելու վայրը, Վանականի միջոցով էր փորձում պարզել, թե որտեղ է նա[63]: Ի վերջո, Վահրամ Գագեցին ապաստանեց Քուլթայիսում[64], ուր, ինչպես նշվեց, փախել էր նաև Ռուսուդան թագուհին: Չնայած Վահրամյանների իշխանության գրավումից հետո մոնղոլները նրա տարածքում շարունակում էին ավարառությունը[65], Հ. Մանանդյանն իրավացի է, գտնելով, որ «Վահրամի երկիրը համեմատաբար քիչ էր տուժել, որովհետև նրա բերդերը կամովին անձնատուր էին եղել և տվել էին մոնղոլական զորքերին իրենց անասուններին ու գույքը, ինչ որ սրանք պահանջել էին»[66]: Մոլար նոյինը գրավված վայրերում վերակացուներ կարգելով, աշնանն իր զորաբանակով վերադարձավ Մուղան՝ ձմեռելու:

Ավագ Զաքարյանի վասալ Էլիկում Օրբելյանին պատկանող Սյունիքի գրավումը, Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ, բաժին էր ընկել Ասլան նոյինին: Երբ վերջինս իր զորաբանակով ներխուժում է Սյունիք, Էլիկումն իր մերձավորների հետ ամրանում է Հրաշկաբերդ անառիկ ամրոցում: Ասլան նոյինը համոզվելով, որ դրա գրավումն «անհնարին էր ի մարդկանէ», պատգամավորի միջոցով Էլիկումին համոզիչ բացատրում է նրա իրավիճակի անելանելիությունը և խոստանում հանձնվելու դեպքում բարի վերաբերմունքի արժանացնել, իսկ հակառակ պարագայում՝ ամբողջ գերդաստանով ոչնչացնել: Էլիկումն իրերի դրության սթափ գնահատմամբ, առանց Ավագ Զաքարյանից թույլտվություն խնդրելու, Ասլան նոյինից անվտանգության հավաստիք ստանալով, բազմաթիվ ընծաներով դնում է նրա մոտ և հպատակություն հայտնում[67]: Մոնղոլ զորապետն այնուհետև, հակառակ Լ. Բաբայանի և Հ. Ստեփանյանի պնդմանը[68], առանց որևէ դիմադրության հանդիպելու գրավում է Էլիկումի տիրույթները: Դրանցից սյունյաց պատմիչը հանվանե հիշատակում է Վայոց ձորն ու Եղեգիքը, մինչև Գառնիի դիմաց ընկած Երերոն գյուղը: Ամբողջ Սյունիքն Ասլան նոյինը հավատարիմ ծառայության պայմանով իբրև սեփականություն վերադարձնում է Էլիկում Օրբելյանին[69]: Մոնղոլները հավատարիմ ծառայություն ասելով հասկանում էին առաջին հերթին իրենց զորքով ծառայելը: Ուստի, Ասլան նոյինն Էլիկումին «կալեալ... առաջնորդ դնաց մինչև յԱնի և հնազանդէր զամենայնն»[70]: Պատմիչի խոսքերից հասկացվում է, որ Էլիկումը մոնղոլներին ուղեկցելով ոչ միայն նպաստել էր իր տիրույթ-

---

[62] Վ ա ր դ ա ն, էջ 145:
[63] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 246:
[64] Վրաց ժամանակագրություն, էջ 73:
[65] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 251:
[66] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Գ, էջ 203:
[67] Օ ր բ ե լ յ ա ն, էջ 403-404: Որոշ հեղինակներ վրիպել են, պնդելով, թե մոնղոլներին առաջինը Ավագ Զաքարյանն է հպատակվել (Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս ի ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք առաջին, Երևան, 1957, էջ 164, Բ. Ա. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Խաչենի իշխանությունը X-XVI դարերում. Երևան, 1975, էջ 187, Գ. Մ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր). Երևան, 1981, էջ 66): Առաջինն այդ քայլին դիմել է Էլիկում Օրբելյանը:
[68] Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 208, Հ. Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 67:
[69] Օ ր բ ե լ յ ա ն, էջ 404:
[70] Նույն տեղում:

ների անարյուն ու դյուրին նվաճմանը, ինչով մասամբ բացատրվում է նրա նկատմամբ Ասլան նոյինի բարեհաճությունը, այլև այն, որ նա սեփական հեծելազորով մասնակցել է Անիի գրավմանը: Ինչ վերաբերում է Գ. Գրիգորյանի այն կարծիքին, թե իբր «Ասլան նոյինն իր նոր դաշնակցին (իրականում վասալին – Ա. Շ.) վստահում է առաջնորդել մոնղոլական զորաջոկատներից մեկը»[71], ապա այն իրականության հետ որևէ ազերս չունի: Այսպիսով, մոնղոլները նվազագույն ճիգերով տիրացան նաև Օրբելյանների իշխանությանը:

Անհամեմատ գժվարին էր Խաչենի դրավումը: Հ. Մանանդյանի պնդմամբ, ըստ Կիրակոս Գանձակեցու, այն բաժին էր ընկել Ջուղբուղային[72]: Առանց այդ պատմիչին վկայակոչելու, Հ. Մանանդյանին կրկնորդել է Լ. Բաբայանը[73]: Իրականում Կիրակոս Գանձակեցին Ջուղբուղայի անունը չի տալիս: Նա գրում է. «Ասացուք արդ և վասն կողմանցն Խաչենոյ... Քանզի ընդ ամենայն կողմանս սփռեալ էին (մոնղոլները – Ա. Շ.) գասպատակս իւրեանց, այլ և վիճակաւ ևս բաժանեալ, հասին անդ ոմանք ի գլխաւորացն զօրու ծանու և զինու և ամենայն աղխիվ բանակին»[74]: Ինչպես տեսնում ենք, պատմիչը մոնղոլ ոչ մի հրամանատարի անունով չի հիշատակում: Այդ բացն իր ձեռքի տակ եղած և մեզ չհասած մի աղբյուրի միջոցով մասամբ լրացրել է Հ. Զամչյանը: Նա պարզել է, որ այդ զորապետերից գլխավորը եղել է Զարմաղանի եղբայր Ջոլան[75]: Մոնղոլները նախ կոտորածի ու դերեվարության են մատնում Խաչենի դաշտային շրջանները, ապա հանգիպելով այնտեղ փախածների ու ամուր վայրերում ապաստանածների դիմադրությանը, նրանց ծնկի են բերում կամ ուժով, կամ էլ խաբեությամբ իրենց մոտ կանչելուց հետո սրի քաշելով ու գերելով: Այնուհետև նվաճողները զբաղվում են անմատչելիության պատճառով Հավախաղաց կոչվող բարձրագիր ամրություններում ապաստանածներով: Օգտվելով այն բանից, որ վերջիններս այդ ամրությունների անմատչելիության վրա վստահ լինելու պատճառով, զգոնությունը կորցրել էին, մոնղոլները հանկարծակի գաղտագողի մտնում են այնտեղ և իրենց զոհերին կամ սրատում, կամ էլ գահավեժ անում[76]:

Մոնղոլներն այնուհետև շրջապատում են Խոխանաբերդ ամրոցը, որտեղ մոնղոլական ներխուժման լուրն առնելով, շրջակա բնակչության հետ ամրացել էր Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալ իշխանը՝ Ավագ և Շահնշահ Զաքարյանների հորաքրոջ որդին: Ինչպես Հրաշկաբերդ ամրոցի դեպքում էր, մոնղոլները զգալով այդ ամրոցի անմատչելիությունը, Հասան-Ջալալին հրավիրում են բանակցությունների: Իր խոհեմությամբ հայտնի այդ իշխանը բազմաթիվ ընծաներով գնում է նրանց մոտ և հպատակություն հայտնում: Մոնղոլները Ներքին Խաչենը վերահանձնում են նրան, փոխարենը պահանջելով հնազանդ հավատարմություն, ինչպես նաև զորքով իրենց ծառայում, ինչն ըստ Կիրակոս Գանձակեցու, նա անթերի կա-

[71] Գ. Մ. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 67:
[72] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 205:
[73] Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 207:
[74] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 267:
[75] Մ. Զ ա մ չ յ ա ն ց. նշվ, աշխ., էջ 210:
[76] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 267:

տարեց[77]: Ինչպես հայտնի է, Զարմազանի որդիներից Բորա նոյինը կնության էր առել Հասան-Ջալալի դուստր Ռուզուքանին[78]: Ըստ Մ. Զամչյանի, դա կատարվել է Զոլայի նախաձեռնությամբ՝ «ի հաստատութիւն պայմանի»[79]: Հետազոտողները Խաչենի մոնղոլական նվաճումը թվագրում են 1236–1240 թթ. միջակայքով: Անկասկած ճիշտ է Հ. Մանանդյանի առաջարկած 1236 թվականը, քանի որ այն հաստատվում է աղբյուրների անուղղակի վկայություններով:

Շահնշահի նստավայր Լոռէ բերդաքաղաքի և գավառի վրա հարձակվեց Զաղաթայը: Կիրակոս Գանձակեցու համաձայն, լսելով այդ բերդաքաղաքի պարիսպների ամրության և Շահնշահի՝ այնտեղ պահվող գանձերի շատության մասին, նա իր հետ վերցրեց ընտիր սպառազինված զորք ու պաշարողական մեքենաներ և Լոռէն պաշարեց: Շահնշահը բերդաքաղաքի պաշտպանությունը հանձնարարելով իր աներորդիներին, ընտանիքով գաղտագողի ապաստանեց մերձակա քարայրներում: Մինչ Շահնշահի՝ պատմիչի դիպուկ բնորոշմամբ «արք կանացիք» աներձագերը Լոռէի պարիսպների ամրությանն ապավինած հարբեցողությամբ ու խնջույքներով էին զբաղված, մոնղոլները պարիսպների հիմքերը փորելով փլցրին դրանք: Բնակիչներին փախուստի հնարավորությունից զրկելով նրանք մտան Լոռէ, որը ենթարկվեց հիմնավոր թալանի, իսկ այնտեղ գտնվածները՝ առանց սեռի ու տարիքի խտրության, անխնա սպանդի ենթարկվեցին: Բնակիչների մի մասն էլ վախից ձորն էր նետվում: Մոնղոլներն սպանեցին նաև Շահնշահի աներորդիներին ու կողոպտեցին խոր հորի մեջ գտնվող նրա գանձարանը: Ապա Զաղաթայն ուժով կամ խաբեությամբ գրավեց Լոռի գավառի բոլոր ամրությունները[80]:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկի վկայությունից հետևում է, որ այս անցքերը տեղի են ունեցել մինչև «ամի, որ է... ՈՁԵ յամսեանն յարաց Ժ յաւուր»[81], որը համապատասխանում է 1236 թ. հոկտեմբերի 23-ին[82]: Շահնշահին հաջողվեց ընտանիքով նավազգույնը խուսափել գերությունից և փախչել Աջարիա[83]:

Լոռէն ու գավառը գրավելուց հետո մոնղոլները շարունակելով Շահնշահի տիրույթների նվաճումը, Լոռէ–Դմանիս–Շամշուլդե–Տփխիս ճանապարհով շարժվելով դեպի հյուսիս, ըստ Կիրակոս Գանձակեցու, գրավում են նաև Դմանիսը, Շամշուլդեն ու Տփխիսը[84]: Վարդան վարդապետ, իր պատմելաոճին հավատարիմ, վերը շարադրվածը խիստ կարճառոտ է ներկայացնում. «Զաղադա նոյինն էառ զԼոռէ քաղաք, և որք յայնր կողմանէ գաւառք»[85]: Ըստ վրաց անանուն ժամանակագրի, Ռուսուդան թագուհին Քութայիս փախչելուց առաջ հրամայել էր մոնղոլների՝ Դմանիս հասնելու

---

[77] Նույն տեղում, էջ 269:
[78] Նույն տեղում, էջ 391:
[79] Մ. Զ ա մ չ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 210:
[80] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 253-254, հմմտ. Վ ա ր դ ա ն, էջ 144, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, Երևան, 1951, էջ 26, 41:
[81] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 191:
[82] Է. Բ. Ա ղ ա յ ա ն. Ակնարկներ հայոց տոմարների պատմության. Երևան, 1986, էջ 291:
[83] Վրաց ժամանակագրություն, էջ 73:
[84] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 254:
[85] Վ ա ր դ ա ն, էջ 144:

դեպքում Տփխիսը հրկիզել, որպեսզի նրանք այն խորեզմցիների նման իբրև բնակատեղի չօգտագործեն: Թագուհու հրամանն ի կատար է ածվում[86]: Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի հաղորդումներից Հ. Մանանդյանը եզրակացրել է, որ վերոհիշյալ երեք քաղաքները Զաղաթայն է գրավել[87]: Վրացական թագավորության մայրաքաղաքի գրավումը մոնղոլական բանակում Զարմաղանից հետո երկրորդ դեմքը հանդիսացող Զաղաթային վերագրելը տրամաբանական է: Սակայն, ինչպես վերը նշվեց, մոնղոլական զորապետերը գործում էին համաձայն նախօրոք կատարված վիճակահանության, ինչը կույր լինելով, անհամեմատ հարիր է պատահականությանը, քան տրամաբանությանը: Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի վկայությունները ևս նման մտահանգման հիմք չեն տալիս: Բացի այդ, վրաց հեղինակը, որը որևէ բնակավայր կամ գավառ գրավողի անուն չի տալիս, Զարմաղանին այլ առիթներով քանիցս հիշատակելով հանդերձ, հայտնում է, որ Շամշուլդեն «գրավել էին Յոսուր Նոյինն ու Անդուրնակը՝ Ավաղի մասնակցությամբ»[88], ինչը մերժելու որևէ կռվան չունենք:

Ավագ Զաքարյանը մոնղոլական ներխուժման լուրն առնելով ամրացել էր իր նստավայր Կայեն բերդում[89], որի շուրջ ապաստանել էր նույնանուն գավառի ամբողջ բնակչությունը: Մոնղոլներն Ավաղի գտնվելու տեղն իմանալով, Դուղատա Նոյինի գլխավորությամբ, ստվար զորաբանակով բերդը շրջապատում են: Կայեն գավառի դժվարամատույց վայրերում ապաստանելու հույսով տարբեր վայրերից այնտեղ էին փախել բազմաթիվ մարդիկ, որի հետևանքով գավառը լցվել էր նրանց հետապնդող մոնղոլական զորքերով: Կայենում պաշարվածների փախուստը բացառելու նպատակով մոնղոլները դրա ստորոտներում բերդի շուրջբոլորը քարե պատ են քաշում: Դրանից հետո նրանք բազմիցս պատգամավորի միջոցով Ավագին առաջարկում են անվարան գալ իրենց մոտ և հնազանդվել: Ավագը չի համաձայնում, բայց քանի որ բերդի ջրի պաշարներն արագորեն սպառվում էին, պաշարումը թուլացնելու միտումով Ավագը մոնղոլների մոտ է ուղարկում իր դստերը և «ինչս բազումս»: Ուղարկվածն ընդունելով հանդերձ, մոնղոլները պաշարումը չեն թուլացնում և դարձյալ իրենցն են պնդում: Պաշարվածները ջուր բերելու թույլտվություն ստանալու հույսով իրենց ձիերն ու անասունները հանձնում են մոնղոլներին: Սակայն վերջիններս ջրի դնացածներին ոչ միայն արգելափակում են, այլև ստիպում, որ իրենց ընտանիքներին իջեցնեն բերդից: Նրանց բոլորին ևս արգելափակում են, իսկ իրենց գուր եկած կանանց խլելով՝ նրանց ամուսիններին սպանում:

Համոզվելով, որ թշնամին պաշարումն ու կոտորածը չի գադարեցնում, Ավագը պաշարյալների վիճակը թեթևացնելու նպատակով որոշում է հանձնվել, բայց ոչ թե Դուղատա Նոյինին, այլ՝ Զարմաղանին: Այդ նպատակով նա վերջինիս մոտ է ուղարկում իր տան վերակացուին (հեջուբին)՝

---

[86] Վրաց ժամանակագրություն, էջ 73:
[87] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 203:
[88] Վրաց ժամանակագրություն, էջ 79:
[89] Նույն տեղում, էջ 73, Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 254:

Գրիգոր Տղային: Զարմաղանն այդ ժամանակ գտնվում էր Սևանա լճի ափին[90]: Դա նշանակում է, որ մոնղոլները գրավել էին նաև Ավագին պատկանող՝ Սևանա լճի ավազանում ընկած գավառները[91]: Զարմաղանն ուրախանալով Դուղատա նոյինին հրամայում է Ավագին շտապ հասցնել իր մոտ, իսկ Կայեն բերդի ու գավառի բնակիչներին այլևս չնեղել: Դուղատա նոյինը բերդից իջած Ավագին ուղեկցում է Զարմազանի մոտ: Ավագն իրեն բարեհաճ ընդունած և օրեցօր ավելի բարձր պատվի արժանացրած մոնղոլ գլխավոր հրամանատարին հպատակություն է հայտնում: Դրան հետևում է Զարմաղանի հրամանը՝ նրա տիրույթներում ռազմական գործողությունները դադարեցնելու և բազմաթիվ գերյալների ազատ արձակելու մասին: Ավագի տիրույթները վերահանձնվում են նրան[92]: Բնականաբար, փոխարենն Ավագը դառնում էր մոնղոլներին հարկատու և պետք է զորքով ծառայեր նրանց: Այսպիսով, մոնղոլներին, կամա թե ակամա, իրավական առումով ենթակա գարձան նաև Ավագին ենթակա իշխանները:

Վրաց անանուն ժամանակագրի համաձայն, մոնղոլներին Ավագի հանձնվելը տեղի է ունեցել Անիի գրավումից հետո, երբ նրանք Պարտավում ձմեռում էին[93]: Սակայն վրաց հեղինակը սխալվել է: Նախ, այդ իրադարձություններին անհամեմատ քաջատեղյակ Կիրակոս Գանձակեցու հավաստմամբ Զարմաղան նոյինն Անիի գրավմանը մասնակից էր դարձրել նաև Ավագին[94], ինչ ենթադրում է վերջինիս անձնատրությունը նախքան այդ: Բացի այդ, վրաց ժամանակագիրը մերթ գրում է, որ Ավագը մոնղոլներին է հանձնվել Անիի գրավումից հետո, երբ ռազմական գործողություններն ավարտվել էին, մերթ, ինչպես տեսանք, պնդում, որ նա մասնակցել է Յոսուր նոյինի և Անգուրնակի կողմից նախքան այդ Շամշուլդեի գրավմանը: Նրա երկրորդ հաղորդումը թվում է հավաստի, քանի որ նա անդամ Տփխիսը գրավող մոնղոլ զորահրամանատարի անունը չի տալիս[95]: Մ. Սիխարուլիձեն Ավագի անձնատրությունը պայմանավորում է նրա անմիջական ենթակա Էլիկում Օրբելյանի մոնղոլներին ենթարկվելով[96]: Դա անընդունելի է, քանի որ ավատական ենթակարգությունը հակառակն է ենթադրում: Մերժելի է նաև վրացի պատմաբանի այն պնդումը, թե Ավագին այդ քայլին էին դրդել նեղ ավատատիրական շահերը[97]: Իրականում նա մոնղոլներին անձնատուր էր եղել առաջին հերթին իր հպատակներին ավելորդ կոտորածներից, գերեվարությունից, թալանից ու այլ զրկանքներից զերծ պահելու նպատակով: Այս առումով ուշագրավ է, որ Կիրակոս Գանձակեցին այդ իրադարձությունների ժամանակ Շահնշահի վարքագիծը բացասաբար գնահատելով, Ավագինը դրական գույներով է ներկայացնում և հիմնավորում նրա անձնատրության անխուսափելիությունն ու

---

[90] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 254-256:
[91] Հմմտ. Մ. Զ ա մ չ յ ա ն ց. Նշվ. աշխ., էջ 210:
[92] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 255-257, հմմտ. Վ ա ր դ ա ն, էջ 144, Օ ր բ ե լ յ ա ն, էջ 404, Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 80, Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ. հ. 1, էջ 41, 392:
[93] Վրաց ժամանակագրություն, էջ 74-75:
[94] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 257:
[95] Վրաց ժամանակագրություն, էջ 73:
[96] Ю. М. С и х а р у л и д з е. Նշվ. աշխ., էջ 23:
[97] Նույն տեղում:

նպատակի արդարացվածությունը[98]: Ասվածը, իհարկե, Ավագի՝ նաև անձնական շահերը հետապնդելը չի բացառում: Այդ քայլով նա նաև կարողացավ պահպանել հայ-վրացական վերնախավում իր գերազդեցիկ, եթե ոչ գերիշխող դիրքը[99]: Զարմաղանն իր հերթին Ավագի միջոցով վրացական թագավորության դեռևս չգրավված երկրամասերի ավելի արագ ու անկորուստ հպատակեցման խնդիր ուներ: Ընդհանրապես, մոնղոլները նման քաղաքականություն վարում էին նաև այլուր: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, թե՛ Ավագը և թե՛ Զարմաղանն իրենց հաշվարկներում երկուստեք չէին սխալվել:

Զաքարյան Հայաստանի արևելյան ու հյուսիսային լեռնային գավառների դրավումից հետո մոնղոլներն անցան նրա մնացած շրջանների նվաճմանը: Դրանք գերաղանցապես ընդգրկում էին Շահնշահի ու նրան ենթակա իշխանների տիրույթները, ինչպես նաև Վանանդը՝ Կարս կենտրոնով, որը պատկանում էր վրաց արքունիքին[100]: Ռազմական գործողությունների անմիջական ղեկավարությունն իր վրա վերցրեց Զարմաղանը: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Զարմաղանն «առեալ զնա (Ավագին – Ա. Շ.) և զամենայն զօրն՝ չոգաւ ի վերայ քաղաքին Անւոյ»[101]: Արարատյան դաշտով դեպի Շիրակ կատարված այս արշավանքից, ինչը երևում է մի ձեռագրի հիշատակարանի հաղորդումից[102], հպատակված երեք հայ իշխաններից զորքով, Ավագից բացի, ինչպես տեսանք, մասնակցում էր Էլիկումը, իսկ Հասան-Ջալալի մասնակցության մասին որևէ տվյալ չունենք: Անիի և հարակից շրջանների վրա արշավանքին Ասլան նոյինի մասնակցելուց և Կիրակոս Գանձակեցու վերը բերված վկայությունից հետևում է, որ դեպի այդ քաղաք են շարժվել նաև իրենց բաժին ընկած գավառներն ու իշխանություններն արգեն գրված և այնտեղ վերակացուներ նշանակած մոնղոլ զորահրամանատարները: Թ. Հակոբյանը, ելնելով Անին բոլոր կողմերից շրջապատվելու իրողությունից, մոնղոլական բանակի և նրան միացած հայկական զորքերի թվաքանակը ոչ պակաս 20 հազար է հաշվել[103], ինչը հավանական է թվում:

Մոնղոլների կողմից Զաքարյան Հայաստանի գրավմանն անդրադարձած հայկական աղբյուրներում, հասկանալի պատճառներով, ամենաշատ վկայությունները քաղաքամայր Անիի մասին են: Դրանցից, ինչպես նախորդ այլ դեպքերում, այնպես էլ այս՝ աչքի է ընկնում Կիրակոս Գանձակեցու գունեղ պատումը: Զարմաղանն Անի հասնելով պատգամավորների միջոցով քաղաքից հնազանդություն է պահանջում: Քանի որ Անին պատկանում էր Շահնշահին, քաղաքի կառավարիչները հանձնվելուն դեմ չլինելով, ինչը երևում է նրանց հետագա վարքագծից, առանց քաղաքի տիրոջ թույլտվության Զարմաղանին որևէ պատասխան տալ չեն համարձակվում: Հասարակ քաղաքացիները, որոնք դեմ էին հանձնվելուն, սպանում են Զարմաղանի պատգամավորներին՝ հարուցելով մոնղոլների կատաղութ-

---

[98] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 253-257:
[99] Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 204-205:
[100] Жизнь царицы Тамар, с. 46.
[101] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 257:
[102] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 196:
[103] Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն. Անիի պատմություն. գիրք երկրորդ, Երևան, 1982, էջ 289:

յունը: Զարմաղանը հրամայում է քաղաքը բոլոր կողմերից շրջապատել, իսկ բաբանները՝ գործի գնել: Չնայած անեցիների դիմադրությանը, մոնղոլներին հաջողվում է ներխուժել քաղաք: Նախքան այդ, Անիի ավագանիներից ոմանք իրենց կյանքը փրկելու նպատակով կեղծ խոստումներով քաղաքից դուրս են բերում բաղմաթիվ բնակիչների: Մոնղոլները կենդանի թողնելով սակավաթիվ կանանց, երեխաների ու արհեստավորների, մնացածներին սպանում են: Ասլա մտնելով այդ ծաղկուն, հարուստ ու շքեղ քաղաք՝ այն, ներառյալ վանքերն ու եկեղեցիները, ավերում ու թալանում են, իսկ բնակչությանը, այդ թվում հոգևորականներին, կամ սպանում, կամ գերեվարում[104]: Այդ հարվածից հետո Անին այլևս ուշքի չեկավ:

Լ. Բաբայանը ենթադրել է, որ մոնղոլները 1236 թ. սեպտեմբերին Անիի մերձակայքում էին գտնվում[105]: Կարծում ենք, որ Անիի հետ կապված անցքերը 1236-ի սեպտեմբերին են կատարվել, քանի որ նրանից հետո գրավված Սուրբ Մարիի գրավման լուրը Հավուց Թառ էր հասել 1236 թ. հոկտեմբերի 23-ին[106]: Ինչ վերաբերում է Անիի գրավման նպատակով մոնղոլների ծախսած ժամանակին, ապա Սիմոն դը Սաինթ-Քուենթինի համաձայն այն 12 օր է տևել[107]:

Մոնղոլներն այնուհետև Զարմաղանի գլխավորությամբ շարժվեցին դեպի Կարս: Անեցիների հետ կատարվածին քաջատեղյակ կարսեցիները քաղաքի բանալիներն առած շարժվեցին նրանց ընդառաջ: Սակայն մոնղոլները, որոնք կամ, ըստ Հ. Մանանդյանի, թալանի մեծ փափագ ունեին[108], կամ էլ դեռ չէին մոռացել իրենց պատգամավորների սպանությունը, Կարսը ևս արժանացրին Անիի ճակատագրին[109]:

Մոնղոլների զոհը դարձավ նաև 1235 թ. Շահնշահի ու Ավագի կողմից ազատագրված[110] Սուրբ Մարի քաղաքը: Այն հեշտությամբ գրավեց ու կողոպտեց Ղարա-Բահադուրը, քանի որ նրա պարիսպները դեռևս չէին նորոգվել[111]: Լ. Բաբայանը ելնելով Կիրակոս Գանձակեցու՝ «նոյն զորքն առին և զքաղաքն սուրբ Մարի»[112] արտահայտությունից կարծել է, թե Ղարա-Բահադուրը Կարսից է շարժվել Սուրբ Մարիի վրա: Սակայն պատմիչը «նոյն զորքն» ասելով նկատի է ունեցել ոչ թե Կարսը գրաված, այլ՝ Զարմաղանի գլխավորած զորքն ընդհանրապես: Մեր պնդման հետ դժվար չէ համաձայնել, եթե նկատի ունենանք Անիի նկատմամբ Կարսի ու Սուրբ Մարիի տեղադրությունը: Դրանցից առաջինն ընկնում էր Անիից արևելք, իսկ երկրորդը՝ հարավ-արևելք: Զարմաղանն իր գլխավոր ուժերով ամրացված Կարսի վրա հարձակվելուց առաջ կարող էր մի զորաջոկատ առանձ-

---

104 Գանձակեցի, էջ 258-259, Վարդան, էջ 144, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 191, 193, 196, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 26 և ուրիշներ:

105 Լ. Հ. Բաբայան. նշվ. աշխ., էջ 206:

106 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 191:

107 S. de Saint-Quéntin. Histoire des Tatares. Paris, 1965, p. 59.

108 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 204:

109 Գանձակեցի, էջ 260, Վարդան, էջ 144, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 41 և ուրիշներ:

110 Գանձակեցի, էջ 260, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 41:

111 Գանձակեցի, էջ 260-261:

112 Լ. Հ. Բաբայան. նշվ. աշխ., էջ 206:

նացնել՝ այլ ուղղության վրա գտնվող և անպաշտպան Սուրբ Մարին գրավելու համար:

Այսքանով Զաքարյան Հայաստանի նվաճման նպատակով մոնղոլական բանակի վարած ռազմական կոնկրետ գործողությունների մասին աղբյուրների տեղեկություններն ավարտվում են: Դրանց շնորհիվ 1236 թ. ձմեռնամուտին այն ամբողջովին, ներառյալ այն իշխանություններն ու դավառները, որոնց գրավմանն աղբյուրները չեն անդրադարձել, հայտնվեց «զանողորմիցն ողորմնն... յանաւրէն»[113] մոնղոլների տիրապետության տակ: Ընդ որում, դա կատարվեց «ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան»[114], իսկ թե ինչո՞ւ, վերը փորձեցինք բացատրել: Արդյունքում, երկրի բնականոն զարգացումը մի քանի դարով ոչ միայն կասեցվեց, այլև հետ շպրտվեց: Ձմեռնամուտին Զարմաղանը բոլոր գրավված վայրերում վերակացուներ կարգելով և հրամայելով, որ փախստականները վերադառնան իրենց բնակավայրերը, դրանք վերաշինեն ու իրենց հարկատու դառնան, վերադարձավ Մուղանի իրենց ձմեռանոցը[115]: Նախքան այդ, Զաքարյան Հայաստանի պաշտպանական համակարգը հիմնովին քայքայելու և հետագա ընդվզումը կամ դիմադրությունը բացառելու նպատակով Ղարա Բուղա անունով մի մոնղոլ հրամանատար թողնվեց տեղում խնդիր ունենալով քանդել պաշտպանական կառույցները, ինչը և արվեց[116]: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, չնայած մոնղոլական զորքերը ցանքատարածություններն անխնա ոտնատակ էին տվել, բնությունը բարեգութ գտնվեց: «Մարդիկն,— գրում է պատմիչը,— որ մնացին է սրոյ անտի, մերք էին և առանց կերակրոյ, ի հասկից անտի անկելոց և կոխելոց լնուին զպէտս յուրյանց. և ձմեռն ոչ ցուրտ եղև սաստիկ... այլ կակուղ և ըստ միտս»[117]: Չնայած բնակչությունը հողը հերկելու հնարավորություն և սերմացու չուներ, չհնձված արտերը ծլեցին և լավ բերք տվեցին, ինչը ժողովրդին փրկեց սովամահությունից[118]: Ըստ Կիրակոս Գանձակեցու նաև «անողորմ ազգն վրաց բազում գութս և խնամս ցուցանէին երթելոցն առ նոսա պանդխտանալ»[119]:

Հաջորդ տարի, ընդունված կարգի համաձայն, մոնղոլական տեղական հրամանատարությունն Ավագին ուղարկեց Ղարաղորում՝ Ուգեդեյի մոտ: Վերջինս «սիրով ընդունէր զնա... դրէր և առ զօրավարսն իւր տալ ի ձեռն նորա զիւր աշխարհն և նովաւ նուաճել ասլստամբսն, որ եղև իսկ»[120]: Ասլստամբներ ասելով մեծ խանը նկատի ուներ դեռևս իրենց հպատակությունը չհայտնած Ռուսուդան թագուհուն և հայ ու վրաց իշխաններին: Ավագի վերադարձից հետո նրա օրինակով ու միջնորդությամբ նվաճողներին հպատակվեցին նաև Շահնշահը, Վահրամ Գաղեցին, Սարգիս Թմոգվեցին, Հասան-Ջալալը և մոնղոլների կողմից գրավված կամ նրանց հարձակումներին ենթարկվող Արևելյան Վրաստանի իշխանությունների տերե-

---

113 Մատենադարան, ձեռ. №1973, թ. 199 ա:
114 Վարդան, էջ 145:
115 Գանձակեցի, էջ 261, Ակներցի, էջ 23:
116 Ակներցի, էջ 23-24:
117 Գանձակեցի, էջ 261-262:
118 Նույն տեղում, էջ 262:
119 Նույն տեղում:
120 Նույն տեղում, էջ 263:

ը[121]: Մոնղոլները «զիւրաքանչիւրը երկիր տային նոցա և առժամանակ մի ներումն»[122]: Դրանից հետո զանգվածային սպանդը դադարեց, իսկ տարաբնույթ բռնությունները մեղմացան, ինչի շնորհիվ «սկսաւ երկիրն առ սակաւ սակաւ զչինութիւն առնուլ»[123]: Սակայն դա հարաբերական վերաշինություն ու անդորը էր:

ЗАВОЕВАНИЕ ЗАХАРИДСКИЙ АРМЕНИИ МОНГОЛАМИ

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

Резюме

Грузинское государство, в состав которого на принципах феодальной субординации входила Захаридская Армения, вступило в четвертое десятилетие XIII в. как государство, которое не в состоянии было противостоять маломальски серьезному противнику. Причиной тому были тяжелые удары, нанесенные стране и преимущественно Захаридской Армении в 1220-х годах, во-первых, со стороны монголов, затем кпчагов и в особенности хорезмийцев, а также фактический развал оборонительной системы и углубление феодальных противоречий. О ситуации в грузинском государстве осведомлены были монголы, которые после взятия Гандзака в 1232 г. находились в Алуанке. Их 30-тысячная армия, во главе с Чармаганом, исходя из административно-территориального деления грузинского государства и расположения оборонительных укреплений, разделившись на отдельные отряды, в 1236 г. (по некоторым сведениям в 1235 г.) напала на Захаридскую Армению. Не получив никакой помощи от грузинского двора и князей, члены феодального дома Захаридов и их вассалы, убедившись в бесперспективности активного сопротивления, укрылись в своих крепостях или нашли убежище в Западной Грузии, куда сбежала царица Русудан. В конце концов, желая покончить с опустошениями, грабежами, угоном в плен и массовой бойней, развязанной монголами, сохранив при этом свои господствующие позиции среди армяно-грузинской феодальной знати, Авак Захарян, являвшийся вторым лицом грузинского государства, подчинился монголам. После захвата Захаридской Армении в 1236 г. по примеру Авака Захаряна и при его посредничестве остальные армянские князья также подчинились монголам, получив обратно свои княжества.

---

[121] *Նույն տեղում, էջ 257, Վրաց ժամանակագրություն, էջ 79: Ստացվում է, որ Հասան Ջալալը մոնղոլներին երկու անգամ է հպատակություն հայտնել վերջին անգամ, ըստ երևույթին, արգեն պաշտոնապես:*

[122] *Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 263, Վրաց ժամանակագրություն, էջ 75-76, Ա կ ն ե ր ց ի, էջ 23:*

[123] *Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 261:*